



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
«ՀԱՅԱՊԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ
«07» 02 2017 թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆԵՈՒԹՅԱՆ

ԲՓ 09

Ձեռնարկողը՝

<<Աթոռուն Գրուպ>> ՍՊԸ

Ք. Արարատ, Խանջյան 60/3,

Գործունեությունը՝

**Արարավի գրավերդինների և կավերի հանքավայրի
7-C1-II ենթաբլոկի արդյունահանման շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահավման հաշվեդումների մարզ**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՐԵՄԻ-Ի
սնօրեն՝**

Վ. Սահակյան



Առդիր եզրակացությունը՝ 5թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԾՐՁԱԿԱՆ ՍԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

phi EΦ 29

«07» 02 2017р.

*ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի
7-С1-Ա ենթաբլոկի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն*

Uganda stay
Jumah

Պատվիրատո՞ւ
Ներկայացված նյութեր՝

Գործունեության կատեգորիա՝

Տեղադրման վայրը՝

«Աթոռուն Գրուայ» ՄՊԸ

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության

զնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր

«U»

Արարատի տրավերտինի և կավերի հանքավայրը գտնվում է ՀՀ Արարատի մարզում՝ Արարատ քաղաքից դեպի հյուսիս: Մոտակա բնակավայրերն են Ավշար, Գռռավան գյուղերը և Վերի քաղաքը: Հանքավայրի շրջանը գտնվում է Արարատ լան հարթավայրի արևելյան մասում:

ԽՍՀՄ ՊՊՀ-ի 19.05.1989թ-ի թիվ 10658 արձանագրությամբ հանքավայրի Հարավային տեղամասի կավերի և տրավերտինների հաշվեկշռային պաշարները հաստատվել են հետևյալ քանակներով՝

-Կավեր՝ A կարգով՝ 13870.0հազ.տ, B կարգով՝ 11845.0հազ.տ, C1 կարգով՝ 25542.0հազ.տ:
-Տրավերտիններ՝ A կարգով՝ 5798.0հազ.տ, C1 կարգով՝ 4471.0հազ.տ:

Նախագծված բացահանքի եզրագծում տրավերտինների հաշվեկշռային պաշարները կազմում են 870.0 հազ.մ³ կամ 2175.0հազ.տ, մակարացման ապարները՝ 19718մ³:

Ենելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից, նախատեսվում է տեղամասը մշակել բաց եղանակով, միակողմանի խորացող մշակման համակարգով, օգտակար հանածոյի նախնական կտրտմամբ, մանրացմամբ:

Նախնական կտրտումը, մանրացումը կատարվելու է «Урал-33» մակնիշի կտրիչաշղթայավոր քարհատ մեքենաներով, որից հետո ստացված տրավերտինի բլոկները KC-3575A ավտոմոբիլային կոռունկով բարձվում են ԿրАЗ-256Б մակնիշի ավտոինքնաթափերը և տեղափոխվում ցեմենտի գործարան, ուր ենթարկվում են երկրորդային մանրացման:

Կտրտման ընթացքում առաջացած մանրունքը, տարբեր չափերի տրավերտինիկ կտորները թ0-5124 մականիշի էքսկավատորով բարձվում են նոյն մականիշի ավտոհինքնաթափերը և նոյնպես տեղափոխվում գետենտի գործարան:

Նախագծված բազահանրի պարամետրերն են՝

- առավելագույն երկարությունը - 441.0մ,
- առավելագույն լայնությունը - 88.0մ,
- մշակման բարձրությունների տարբերությունը - 75մ:
- օտարման տարածքը - 3.1հա

Բացահանքի վերջնական եզրագծում ընդգրկված է 687300մ³ կամ 1718250տ տրավերտինի արդյունահանվող զանգված:

Մակարացման ապարների ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 19718մ³:

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում, բացահանքում կլինեն տրավերտինների հետևյալ կորուստները՝

1. Ըստ լեռնատեխնիկական պայմանների՝
- բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում՝ 21%
2. Շահագործական կորուստները, կապված օգտակար հանածոյի տեղափոխման հետ, ընդունված են 0.5%-ի չափով:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ մարգող պաշարների կազմում է 17400մ³ կամ 43500տ: Հաշվի առելով նախագծային կորուստները, բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ տրավերտինի արդյունահանվող զանգվածի՝ կազմի՝ 13746մ³ կամ 34365տ:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 50 տարի:

Բացահանքը 100% արտադրական հզորության հասնելու համար իրականացվելու են հետևյալ ծավալի լեռնակապիտալ աշխատանքներ՝

- Մինչ 955մ հորիզոն մուտքային ավտոճանապարհի կարգաբերում և անցում՝ L=225մ, b=8մ, V=410մ³;
- 955մ հորիզոնից՝ մակարացման ապարների հեռացում, V=54մ³;
- 955մ հորիզոնից տրավերտինի հանույթ՝ V=120մ³;
- 950մ հորիզոնից՝ մակարացման ապարների հեռացում, V=853մ³;
- 950մ հորիզոնում՝ առաջնային աշխատանքային ճակատի ստեղծում (ուղեկցող հանույթ), V=600մ³;
- Արտադրական հրապարակի կառուցում, V=250մ³:

Նշված աշխատանքները իրականացվում են էքսկավատոր-ավտոինքնարափ-բուլդոզեր լեռնատրամասպորտային համալիրով, օգտակար հանածոյի մասնատումով, կտրտումով:

Բացահանքի վերերկրյա՝ 955մ-ից մինչև 915մ աշխատանքային հորիզոնների (հանքաստիճաններ) բացումը կատարվում է մուտքային ավտոճանապարհից (որը կապում է բացահանքը լցակույտի և արտադրական հրապարակի հետ) բացող կիսախրամների անցումով:

Խորքային մասի՝ 910մ և հաջորդ հանքաստիճանների բացումը կատարվում է թեք խրամի անցումով:

Բացող կիսախրամների և թեք խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 14.0մ:

Հանքավայրի մշակումը նախատեսվում է իրականացնել ընդերկայնական միակողանի խորացման համակարգով:

Ընդունված համակարգի պարամետրերն են՝

- Ենթաստիճանի բարձրությունը՝ 2.5մ,
- Մարգած հանքաստիճանի բարձրությունը՝ 5մ,
- աստիճանի թեքման անկյունը՝
աշխատանքային – 90°,
վերջնական դիրքում - 75°,



- բացահանքի կողի թեքման անկյունը – 60° ,
 - անվտանգության թերմայի լայնությունը՝ 2.0մ ,
 - աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը – 20մ .

Նախագծվող բացահանքի սահմաններում տրավերտինների հաստաշերտը ծածկող մակարացման ապարները ներկայացված են ալյուվիալ-պրոլյուվիալ և էլյուվիալ-դելյուվիալ փուլսր բեկորային նստվածքներով:

Արտաքին մակարացման ապահները ԴՅ-170.03 մակնիշի բուլղոգեր փխրեցուցիչով
մշակվում են ու տեղափոխվում մինչև 15-20մ հեռավորության վրա: Այնուհետև, կուտակված
մակարացման ապահները, ԹՕ-5124 մակնիշի էքսկավատորով բարձվում են
ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվում բացահանքի արևելյան կողմ և պահեստավորվում՝
ժամանակավոր առտաքին լցուկութում:

Մակարացման ապարների ծավալը բացահանքի եզրագծում կազմում էն 19718մ³, որոնք հեռացվում են 955-915մ հանքաստիճանների շահագործմանը գուղահեռ:

Հաշվի առնելով հերթափոխի ընթացքում առաջացող մակաբացման ապարների փոքր ծավալները (2.0m^3), ապարների տեղափոխումը դեպի լցակույտ կատարվում է ըստ անհրաժեշտության, արդյունահանման աշխատանքներին զուգահեռ:

Լցակույտային ապարները ներկայացված են հողմնահարված տրավերտինների կտորներով, ավազներով, ավազակավային ապարներով: Հողաբուսական շերտը փաստացի բացակայում է: Արտաքին լցակույտ տեղափոխվող ապարների ծավալը կազմում է 18318մ³: Լցակույտի հիմքի մակերեսը կազմում է 3065մ², շեպի թերման անկյունը՝ 33-35°: Լցակույտառաջացումը իրականացվում է բուլդոզերային եղանակով: Օգտագործվում է բացհանքում առկա բուլդոզերը:

Ուկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում, մակաբացման ապարները կփողեն 885-895մ հորիզոններում և կհարթեցվեն: Աշխատանքները կիրականացվեն բուլղոգերի օգնությամբ:

Նախատեսվում է տրավերտինի արդյունահանումն իրականացնել կտրիչաշղթայավոր քարհատ մեքենաներով: Տրավերտինի առանձնացումը զանգվածից կատարվում է «Урал-33» մակնիշի քարհատ մեքենայով, հորիզոնական և ուղղաձիգ հատումներով:

Բացահանքի ջրամատակարարությունը կատարվելու է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Բացահանքի ջրամատակարարությունը իրականացվելու է բերովի ջրով: Խմելու ջուր բերվում է ՎԿ-ԲՎՀ-1.4 ջրի ցիստեռնով: Տեխնիկական ջուրը, որն անհրաժեշտ է փոշենստեցման համար բերվում է ԿՕ-002 մակնիշի ավտոմեքենայով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն գետնաջրերը բացակայում են, հետևապես բացահանրում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում:

Մթնոլրտային տեղումների ջրերը հեռանում են, ներծծվելով ապարների մեջ, դրանց ջրաբականցելիության հետևանքով:

Կենցաղային կեղտաջրերը ջրցուլարանից և ճաշարանից ինքնահոս կերպով թափվում են 25.0մ³ տարողությամբ, անջրաթափանց արտաքնոցի հորը, որտեղից էլ պարբերաբար հեռացվում են:

Տեխնիկական ջուրը նախատեսվում է օգտագործել շոգ և չոր եղանակներին՝ հանքախորշում, արտադրական հրապարակում, ավտոճանապարհներին, լցակույտում՝ փոշենստեզման նախակռույթում:



Բացահանքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Ավշար համայնքի տարածքում, որի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանն իր ներդրումը կունենա նաև ընկերությունը: Ընկերությանն իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի դեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե: Տարեկան նախատեսվում է 900հազ. դրամ գումարի ներդրումներ կատարել: Ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում, մակաբացման ապարները կփոփէն 885-895մ հորիզոններում (2700մ²) և կհարթեցվեն:

Հարթեցման աշխատանքներ կիրականացվեն նաև արտաքին լցակույտի, արտադրական հրապարակի տարածքներում, բացահանքը սպասարկող ավտոճանապարհներում: Ուկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսվող գումարը կազմում է 1040.8հազ. դրամ:

Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները: Տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա

Փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կատարել ջրցանում,

Օգտագործվող ազրեգատները աշխատեցնել սարքին վիճակում վնասակար գագերի գերնորմատիվային արտանետումները բազանելու համար:

Մերենաների աշխատանքի ժամանակ նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների քանակը փոքրացնելու համար սարքավորումների վրա Վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում: Ինչպես նաև հետևել որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քայլուղերի արտահոսք տեղի չունենա:

Զբային ավազանի կեղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՆԳՈՒ

Այսպիսով հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախազգի իրականացմանը: Փորձաքննական գործնթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել զնահատման հաշվետվության փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չքավարաբան դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:

3. Առաջացած շինադրի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«**Աթոռուն Գրուպ**» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «**Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի 7-C1-II Ենթաբլոկի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:**

A circular blue ink stamp with a double-line border. The outer ring contains the text "INTERNATIONAL EXPERTISE CENTER" at the top and "EXPERTS IN THE FIELD OF POLYGRAPHY" at the bottom, separated by a horizontal line. The inner circle contains "IMPACT" at the top, "EVALUATION" in the middle, and "TESTIMONY" at the bottom. In the center of the stamp is the number "02543163". A handwritten signature "Robert" is written across the stamp.

Հ. Զուրնասյան